

## 1.7. Վիճակագրական դասակարգիչներ<sup>14</sup>

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 3 վիճակագրական աշխատանքները (170001-170003 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում: Ընդ որում, 170001 և 170002 ծածկագրերով նախատեսված աշխատանքներն ավարտվել են ամբողջությամբ և հաջորդող տարեկան ծրագրում ներառված չեն:

Տեխնիկատնտեսական ու սոցիալական տեղեկատվության դասակարգիչների ներդրման նպատակով, հիմք ընդունելով Եվրոպական Համայնքի նմանատիպ Սի Փի Էյ և ՊՈՌԴԿՈՄ, ինչպես նաև հաշվի առնելով Անկախ պետությունների համագործակցության միջպետական վիճակագրական կոմիտեի կողմից մշակած՝ Էս Կա Պե դասակարգիչները, մշակվել է «Արտադրանքի դասակարգում ըստ գործունեության տեսակների» Հայաստանի դասակարգիչը (մաս 1՝ դասակարգիչ, մաս 2՝ պարզաբանումներ, մաս 3՝ այբբենական անվանացանկ):

Մինչ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության պետական փորձաքննությանը ներկայացնելը, դասակարգչի նախագիծը կարծիքի է ներկայացվել նաև շահագրգիռ նախարարություններին և գերատեսչություններին (թվով՝ 14): Պետական փորձաքննության արդյունքում դասակարգիչը հավանության է արժանացել Ստանդարտացման գիտատեխնիկական խորհրդի 13 դեկտեմբերի 2004թ. նիստում և հաստատվել ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 21.01.2005թ. թիվ 6-Ն հրամանով (ՀԳ 006.1- 2004, ՀԳ 006.2- 2004, ՀԳ 006.3- 2004):

Չուզահեռաբար, շարունակվել են նաև տնտեսական գործունեության տեսակների և արտադրանքի դասակարգիչների՝ պետական վիճակագրության բնագավառում ներդրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները: Մասնավորապես, մի շարք վիճակագրական դիտարկման փաստաթղթեր և դրանց լրացման հրահանգներ (մեթոդական ցուցումներ) արդեն իսկ համապատասխանեցվել են նաև դասակարգիչներով սահմանված սկզբունքներին և մոտեցումներին:

---

<sup>14</sup> Տես՝ Ծրագիր, Հավելված I: